կած լինեն մի որպիսի և իցէ խաւով։

Բայց այս Ն-որդ հասակի վերջերքում կոկոն չինելու յարմար տեղ չը գտնելուց որդիները սղմվում, գեղնում և սատկում են, բայց յաճախ պաճուճապատի են փոխվում առանց կոկոն հիւսելու։

Մի քանի խօսք էլ շերամի սերմ հանելու վերաբերութեամբ։

Որովհետև այս գործողութիւնը ևս մեր ժողովրդի համար բոլորովին անծանօթ չէ, ուստի առանց երկարաբանութեան՝ այստեղ ես ցոյց կը տամ միայն մի քանի գլխաւոր կանոններ, որոնց վրա ուշադրութիւն դարձնելը անհրաժեշտ է։

Սերմացու կոկոնները ընտրելուց պէտք է է նկատի ունենալ՝ որ իգական կոկոնները միշտ աւելի խոշոր, աւելի կոլոլաձև, աւելի բութ և աւելի ծանր են, քան արականները։ Երկու տեսակներին էլ պէտք է հաւասար չափով ընտրել։ Կոկոնները ընտրելուց յետոյ նոքանց պէտք է կտաւով ծածկած սեղանի վրա տարածել և թիթեռներ հանելու համար նրանց միջից նորէն ջոկել միայն այնպիսիներ, որոնք խիստ կատարեալ ձև ունեն։

Աւելի լաւ է՝ եթէ հէնց սնուցանելու սկզբից սերնդացու շերամները՝ առանձին տեղ և առանձին խնամքով սնուցանեն, այն է նրանց աւելի ընդարձակութիւն և աւելի ընտիր սնունդ տան։

Արական կոկոնները առանձին թղթի կամ կաւի վրա պէտք է առնել, իգականները առանձին։

Մթին զոյն ունեցող, գեղնած, թոյլ և բաւականաչափ ազուամազով չը ծածկած թիթեռները պէտք է դէն ձգել։ Առաւել լաւ պէտք է համարել այն արուները, որոնք իգական բաժնի մէջ դուրս կը գան, իսկ արական բաժնում դուրս եկող էգերը թոյլ և անպէտք են։ Մինչ թիթեռների ցամաքելը, 2—3 ժամերի ընթացքում արուները էգերից պէտք է բաժանած լինեն։ Զուգաւորումը պէտք է 6 ժամից պակաս և 10 ժամից աւել չը տևի։ Եթէ զոյգերը 6 ժամ չը լրացած բաժանվելու լինեն, պէտք է նորէն միմեանց մօտեցնել և կամ էգի մօտ նոր արու թիթեռ մօտեցնել։ Արուներին հեռեւակ օրը երկրորդ անգամ կարելի է գործ ածել միայն այն դիպուածում, երբ նոր արուներ չը լինեն դուրս եկած։ Նրանց պէտք է ծակոտկենաւոր խուփերով թղթէ արկղիկների մէջ պահել։ Երրորդ օրում ածած սերմերը լաւ չեն լինում, ուստի թիթեռների մինչ այն օրն էլ պահելը հարկաւոր չէ։

Ցաք և խոնաւ սենեակների մէջ թիթեռների համար աւելի հեշտ է սերմ ածել, քան զով և բոլորովին ցամաք սենեակների մէջ։

Այսուհետ ինձ մնում է կրկին անգամ դառնալ դէպի մեր շերամապահները՝ առաջարկելով նրանց մի հանձնարարութիւն։

Ինչպէս յայտնի է՝ շերամի գլխաւոր կրօտարեր հիւանդութիւնը ժառանգաբար է անցնում, դրա համար էլ շերամապահի ամենագլխաւոր հոգատարութիւնը այն է լինում, որ հիւանդոտ սերմ չը պահէ։ Բայց մերայինը արդէն փորձով գիտեն թէ որքան դժուար է այս բանից զգուշանալը։ Ցնծումը ես մի որ և իցէ անձ որ և իցէ մի օտար երկրից, ով գիտէ ինչ միջոցներով ձեռք ձգած սերմ է բերում և հաղար ու մի երդումներով հաւատացնելով, որ այդ սերմը այս ինչ կամ այն ինչ անունի տեսակից է՝ իր ուզած դներով ծախում է ժողովրդեան վրա։ Ցոյզը Աստուծոյ վրա դրած՝ խեղճ-միամիտ շերամապահը պահում է այն սերմը՝ խնամում մեծացնում է շերամներին, որոնք կոկոն չինելու ժամանակին մօտեցած՝ երևան հանելով ժառանգութեամբ ստացած իրանց պակասաւորութիւնը՝ սկսում են կոտորվել և օգը հանել շերամապահի բոլոր յոյսերը, բոլոր աշխատութիւնը։ դեռ լաւ է եթէ առաջին հասակներում կոտորվէին։ Ահա այս հանգամանքն ուշի առաջ ունենալով ցանկալի էր՝ որ մերոնք իրանք սկսեն պահելու սերմ հանել ինչպէս անում էին առաջ։

Դիտեմ, իմ սիրելի հայրենակիցներ, սրա դէմ դուք ինձ պիտի պատասխանէք, որ «այժմ այդ բանը անիրագործելի է», որ «այդ չի յաջողվիս, բայց հաւատացէք, որ այդ մի մոլոր կարծիք է ձեր մէջ, այդ մի նախապաշարմունք է։ Ինչու դուք պէտք է կարծէք, որ աշխարհիս ով գիտէ ինչ քունչ ու պուճանում մի որ և իցէ բաղդախնդրին այդ բանը կը յաջողի, իսկ ձեզ չը պէտք է յաջողի, որ ի ծննդենէ նուիրած էք այդ գործին։ Ես հաւատացած եմ, որ այդ բանը կը յաջողի ձեզ և անպատճառ կը յաջողի։ Հարկաւոր է միայն մի փոքր աւելի հմտութիւն և աւելի եռանդ ու սոկուռութիւն։

Ես չեմ ասել որ հէնց առաջի անգամից դուք բոլորը ձեր հանած սերմիցը պահէք, հոգ չէ, կարող էք դեռ մի քանի ժամանակ օտար սերմ պահել, իսկ մինչոյն ժամանակ էլ՝ թէկուզ փոքրի համար՝ մի փոքրիկ մաս ձեր հանած սերմից պահեցէք, մինչև որ դուք բոլորովին կը համոզվէք այդ բանի յաջողութեան մէջ։

Ս. Մ.

ՆԱՄԱԿ ՄՈՍԿՎԱՑԻՑ

30 մայիսի

Մայիսը հասաւ իր վախանին։ Հանալաբանական քննութիւնները վերջացան։ Երկու ամիս աւելի սենեակներում փակված ողորմելի նահատակները լոյս աշխարհ դուրս եկան։ Ազատվեցի և ես։ Թոյլ կը տայ ինձ ընթերցողը մի թեթև հայեացք գցել ուսանողական կեանքի այդ տաք մթնոլորի վրա։ Ես ուշադրութիւն եմ դարձնում այդ անենչան հանգամանքի վրա, որովհետև նա պարզ ցոյց է տալիս, որ մի քանի բաների մէջ ուսանողները չատ առաջ չեն գնացել գիմնազիստներից, որ նրանց մէջ զարգացաբար դեռ մնացել է այն երեխայական թեթևութիւնը, որ յատուկ է և մի և նոյն ժամանակը ներելի փոքրիկ աշակերտներին։ Հարկաւոր է չատ մօտիկ ծանօթ լինել ուսանողների հոգեկան զրութեան հետ քննութիւնների ժամանակը, որ հասկանալ, թէ որքան դատարկութիւն, որքան անմիտ ինքնասիրութիւն, որքան զզվելի ֆանֆարոնութիւն է պարունակվում նրա մէջ *)։ Քննութիւնները,—դա կարելի է ասել մի կատաղի որսորդութիւն է թուանշանների յետևից։ Ամեն մեկը ախտատում է լաւ բալլեր ստանալ, և այդ ախտատութիւնը անչորոք ծայրայեղութեան է հասնում։ Դուք կը տեսնէք ախոիկի անհասներ, որոնք կը բաւականանալով փոխարկական կամ կանդիդատական թուանշաններ ստանալով, պրոֆեսսորների երեսը վեր են բերում, կուռում են, սկանդալներ են անում հպարտացնող, զուռզացնող, իդէալական 5-երը ստանալու համար։ Նրանց հարկաւոր է այդ պանծալի թուանշանը նրա համար միայն, որ ամեն տեղ պատահած ժամանակը քննութեան վրա խօսք ընկնելիս մի պատմելիս ինքնասանուտիմամբ լիքը բոլորով յայտնեն բոլորին, թէ ստացել են ամեն առարկաներից «ՐՐՐՐՈՒԼԱՅՈ ՊԱՏԵՐԿՍ»,—այդ է նրանց փափագը, այդ է նրանց փառքն ու բաղդանքը, այդ են նրանց հասարաստական կեանքի ամենաթանկագին բոպէները, այդ է նրանց 'փրացնում, տուզացնում և ստիպում նայել իրանցից ցած բալլեր ունեցողների վրա, ինչպէս ճանճ ու մժեղի վրա... Դուք կը տեսնէք այնպիսի անհասներ, որոնք բարձր թուանշան ստանալուց յետոյ ամեն տեղ, ամեն մի քայլափոխում, ամեն մի պատահող ընկերոջ կը յայտնեն իրանց յաղթութեան լուրը, կը յայտնեն ոչ միայն պատահած իրողութիւնը, այլ նրա պոչից կապելով մի ցնդաբանական առասպել՝ թէ ինչպէս պրոֆէսսորը ապշած էր մնացել նրանց հիանալի պատասխանից, ինչպէս նա պլեդ սեղմել էր նրանց ձեռքերը ամբողջ լսարանի առաջ, և յայտնել էր թէ նա բաղդաւոր է համարում իրան, որ ունի այսպիսի հանճարեղ աշակերտներ, ինչպէս ներկայ եղող ուրիշ պրոֆեսսորները մեկ մեկու յետևից մօտացել են և ձեռք են տուել նրանց, յայտնելով նոյնպէս իրանց սրտի խորին հրճուանքը...և այդ ցնորական պատմութիւնը կրկնվում է անթիւ ու անհամար անգամ, կրկնվում է անամօթաբար, բերնից բերան է ընկնում, ծիծաղելու և ծաղրելու նիւթ դառնում... Դուք կը տեսնէք այնպիսի զառամեալ ուսանողներ, որոնք եթէ պակված լինէին անչուշտ մի քանի թուաներ կուսենային գիմնազիայում,—դուք կը տեսնէք, որ նրանք մի ասելոյդ թուանշանի համար, մի փոքրիկ ПЛЮС՝ի համար հոգի կը տան, կը տանջվեն, կը նահատակվեն, ամեն մի պրոֆեսսորի առանձին կը հաւատացնեն, թէ չատ սիրում են նրա առարկայով պարապել, վերջապէս կը ստանան ցանկացածը, ուրախութիւնից ծուլ ծուլ կը լինեն, Ադամ Ադամի իթի պէս մաղալիս կը տան, կը թափան, կը ցնծան և ամեն անց ու դարձ անողին դանդաղ ու սարդ կանեն, զարկա կը տանեն իրանց պատահած բաղդաւորութեան պատմութիւնը անելով։ Դուք մի նայէք նրանց տարիքի վրա, նրանք կատարեալ երեխայական բընաւորութիւն ունեն, երեխայ են, որովհետև չեն հասկանում թէ ինչպէս նրանց ծաղրում են ընկերները։ Մի և նոյն ժամանակը անկարելի է նրանց մտաւորապէս անգարդացած համարել, անկարելի է, որովհետև նրանք չատ կարդում են, գրում, խօսում,—նրանք խրատում են մինչև անգամ ուրիշներին, որ չաշխատեն երեխայարար թուանշանները յետևից ընկնել, նրանք ծաղրում են այսպիսիներին, երեխայ են անուանում... Այդ սարսափելի հակասութիւնը ամենափառաւոր ապացոյց է ամենաստոր դատարկութեան...

Դուք կը տեսնէք այնպիսի անհասներ, որոնք ամբողջ տարի պարապում են, սովորում, անգիր անում, իսկ քննութեանը բարձր թուանշան ստանալուց յետոյ ձեզ կը հաւատացնեն, երդում կրակը կրնկնեն՝ թէ ընդամենը մէկ անգամ էին կարդացել լեկցիաները։ Ի՞նչ է ուզում դրանով ասել պատուելի ստախօսը,— ի՞նարկէ այն, թէ տեսնէք ես ինչպէս հանճարեղ զլուխ ունեմ, ինչպիսի հրաշալի ընդունակութիւններ են պարունակում այդ հաղուագիւտ գլխի մէջ...Դուք նայեցէք թէ ինչպէս այդ թանգագին գլխի տերը քթի տակ ծիծաղում է իրանից վատ նչանաներ ունեցողների վրա, ինչպէս բեղերը ոլորելով, ձեռքը կողքին դրած աչքերը կուչ անելով բարեհաճում է նայել հասարակ մահկանացուների վրա, հաստատ համոզված լինելով, որ իր և նրանց մէջ մի և նոյն անդունդը կայ, ինչպէս երկնքի և երկրի մէջ։ Նա յիմարաբար համոզված է նոյնպէս, որ բոլոր չրջապատողները երկրպագում են նրան, զարմանում են, նախանձում են, հիանում են նրա բազմատեսակ քանքարների վրա...Ընկերները զզվում են, անհամբերութիւնից յուսահատվում են, երբ որ նա սկսում է իր անգլուխ ու անվերջ, այսմուրքի չափ պատմութիւնը իր հանճարի մասին. Նրանք ախտատում են խօսքը փոխել, բայց նա իր էշն է քշում,—նրա հատ գլխում խոհեմութիւն ասած բառը երբէք տեղ չէ ունեցել...

Դուք կը տեսնէք այնպիսի անհասներ, որոնք քննվելուց 10 րոպէ առաջ դողդողում են, ազազակում են, ողորմի են, լաց են լինում, թէ ոչինչ չը գիտեն, բայց քննվելուց և 5 ստանալուց յետոյ խօսացրու նրանց, տես ինչ զուռնա կը փչեն,—Ը, մեր ազա—հարցնում էք դուք նրանցից մէկին—Լդ ոնց էր, որ ասում էիր ոչինչ չը գիտեմ. լաւ տրաք տրաքալէն պատասխանում էիր։—Ինչու չը պէտք է պատասխանէի, քանի որ հիանալի գիտէի, խօսում է հերոսը առանց կարմրելու։... Դուք ուսերդ վեր էք քաշում և անցկենում... Դուք կը տեսնէք մի ուրիշին, որ քննութիւնից մի որ առաջ ձեզ կը հաւատացնի, երկինք գետինը վրայ կը բերի, թէ դեռ լեկցիաներին ձեռք չէ տուել, ահա հիմայ գնում է, որ սկսի սովորել և յոյս ունի մի որ և է 7—8 ժամվայ մէջ մօտ 30 թերթ վերջացնի։—Լդ խօ դժուար է, ախբեր, էդ ոնց պէտք է անես, հարցնում էք դուք հաստատ իմանալով, որ նա այդ 30 թերթը արդէն վաղուց կուլ է տուել ու մարսել։—Ը՛հ, Աստուած ողորմած է, պատասխանում է նա, և այդ պատասխանով նա կամենում է ասել, թէ դուք նրա վրա մի աչքով մի մարկ տաք, նրա համար 30 թերթ պատրաստելը մի քանի ժամում խաղ ու պար է։—Լ՞ էշդ ես, ախբեր, զոչաթ, Աստուած քեզ քո հոր օջախին բաշխի—ցանկանում էք դուք և հեռանում...

Դուք կը տեսնէք մի այլ անհատ, որ քննվելուց առաջ ձեզ կը հաւատացնի, թէ ոչինչ չը գիտէ, թէ եթէ մի փոքրիկ 3 ստանայ պրոֆեսսորի ձեռքերը կը համբուրի։ Գնում է, քննվում, ստանում 3 և... քիթը կախ յետ դառնում։—Ը՛, բարեկամ, ինչ ես փալանդ չուռ տուել, դու խօ մի 3-ի համար տաք մատաղ կը մորթէիր։—Լ՞հ, ինչ ես ասում, բոլորը չորս ու հինգ ստացան, միայն ես երեք։—Դէ բաւական է էլի, ախբար դու ասում էր ոչինչ չը գիտես։—Мало-ли что! պատասխանում է նա և հոտալով հեռանում...

Դուք կը տեսնէք մի ուրիշին որ քննութեանը բարձր թուանշան ստանալուց յետոյ փոքր ինչ բարկացած է վերադառնում տունս։—Ը՛, ինչ ես ասպել, հարցնում էք դուք, չը լինի ուզում էիր 8 ստանար։ Դա ձեզ կը պատասխանի, թէ անբաւական է նրանով, որ նրանից վատ իմացողներն էլ մի և նոյն բարձր թուանշանն են ստացել...

Շարունակելի արդեօք։ Բաւական է կարծեմ։ Բերած օրինակներս չափազանց գեղեցկախօս են։ Նրանք պարզ ցոյց են տալիս, որ ուսանող երիտասարդութիւնը, նոր մտքերով, վեհ սկզբունքներով, բարձր իդէալներով վառվող սերունդը դեռ չէ թօթափել իրանից գիմնազիայում ձեռք բերած հրեխայական յատկութիւնները։ Ես խրատներ չեմ տալիս, քարոզ չեմ կարդում, այլ մատանի եմ անում այն տխուր երևոյթի վրա, այն ցաւալի իրականութեան վրա, որ մի կողմից հակասութիւն է կազմում ուսանողական կեանքի գեղեցիկ կողմերի հետ։ Թող չը կարծեն իմ այս տողեր կարդացող ընկերները, որ ուսանողութեան այդ թոյլ կողմի վրա յարելիվելով ես ինձ բացատրութիւն եմ համարում... ընդհանուր հոսանքի դէմ դժուար է լողալ...

Ս. Դաղեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մենք միշտ ասել ենք որ մեր ուսումնական բրիգիլները չատ լաւ կանէին եթէ ուշադրութիւն դարձնէին մեր ժողովրդական բժշկների միջոցների վրա և այսպիսով կը հարատևնէին գիտութիւնը։ Օրինակ ուսումնական բժշկներից ոչ ոք չը գիտէ բժշկել սօլիտէր ասված հիւանդութիւնը, այն ինչ մեր ժողովրդական բժշկները չատ միջոցներ ունեն այդ ցաւի դէմ և կատարելապէս բժշկում են այդ ցաւից մի քանի ժամվայ մէջ։ Այժմ, օրինակ, կայ թիֆիլիսում մի ազուեցի հայ, որ չատ աջող կերպով է բժշկում այդ ցաւից։ Խորհուրդ կը տայինք պարոնին ներկայացնել իր գիւտը բժշկական ընկերութիւնին։ Մենք հաւատացած ենք, որ եթէ մեր ուսումնական բժշկները այդքան հպարտ և այդքան ինքնահաւան չը լինէին, չատ բան կարող էին սովորել մեր ժողովրդական բժշկներից։

—

Մի վարժուհի, որ աւարտել է ուման ընթացքը Թիֆլիսի Գայիանեան օրիորդաց դպրոցում, իջեցրում է մեզ յայտնել, որ ցանկանում է մասնաւոր դասեր տալ։ Հայցէի մասին կարելի է տեղեկանալ կենտրոնական գրավաճառանոցում, Արծրունու տանը, Գվորգովի փողոցի վրա։

—

Շնորհակալութեամբ ստացանք «Ընդհանուր այլարարագրութիւն դասագիրք հայոց դպրոցների համար, առաջին տարի, Նախագիտելիք։ Այդ գրքոյկի հեղինակը պ. Ն. Ամիշեանցն է։ Գիրքը տպված է Թիֆլիսում Յովհաննէս Մարտիրոսեանի տպարանում, Ներկայ 1880 թ։ Դա հրատարակութիւն է Զ. Գրիգորեանցի «Լովկասեան գրավաճառանոց» և ինչքան կարողացանք նկատել վատ չէ կազմած և բաւական լաւ յարմարեցրած է մեր դպրոցների մէջ դասաւանութեան համար։ Գինը 35 կոպ. է, իսկ գումարով առնողներին 20% զիջումն է լինում։

—

Ցանցան քաղաքներից և գիւղերից մենք ստանում ենք բողոքներ, որոնցով յայտնում են տգէտ անկիրթ և մինչև անգամ անբարոյական անձինքների քահանայ ձեռնադրելու մասին։ Այս բողոքները մենք թողնում ենք անտիպ մեր ընթերցողների ուշադրութիւնը չը ձանձրացնելու համար. բայց չը գիտենք, թէ մինչև երբ պէտք է չարունակվեն այս տեսակ անկարգութիւնները։

—

Շնորհակալութեամբ ստացանք «Երբէք օր ճանապարհին նուէր մանկանց, զրքոյկը, հեղինակութիւն Ա. Գուլակեանցի։—Թիֆլիս 1880 թ. Ա. Մելիք-Շահնազարեանցի տպարանում։ Գրքոյկի գինը 15 կոպէկ է։

—

«Փորձ» մայիսի տետրակը հրատարակվեցաւ։ Այդ տետրակի մէջ յայտնված է որ ամսագրի խմբագիրը արտասահման է գնացել, այդ պատճառով «Փորձ» յունիսի, յուլիսի, օգոստոսի և սեպտեմբերի տետրակները միասին կը հրատարակվեն սեպտեմբեր ամսին։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԻՈՒՆԻ

---

*) Բացառութիւններ ամեն բանի մէջ կան։